

ԽՆԴԻՐ 1


Արդյունաբերության ակնարկ

Ըստ Ամերիկյան բեռնափոխադրումների ասոցիացիայի (ATA)՝ ԱՄՆ բեռնափոխադրումների ընդհանուր ծավալի 70,9% -ը, ընդհանուր առմամբ \$ 671 մլրդ արժողությամբ ապրանք, տեղափոխվում է 3,63 մլն բեռնատարներով: Այս բեռնատարներից 2.2 մլն-ը վարձակալված են և ամբողջական բեռնված (FTL): Բեռնատարի վարորդը շաբաթական իրականացնում է 2-5 բեռնված տեղափոխում: Բեռնատարի վարորդի կողմից իրականացվող յուրաքանչյուր տեղափոխման ընթացքում իրականացվում է մոտավորապես 100-130 որոշման կայացում: Չարմանակի չէ, որ այդ որոշումները կայացվում են ոչ օպտիմալ՝ առաջացնելով ֆինանսական կորուստներ վարորդներին և փոխադրողներին:

ԽՆԴԻՐ

Բեռնափոխադրումների արդյունաբերությունը խիստ մասնատված է. վարձույթում գործող բոլոր փոխադրողների 99% -ը ունեն 50 կամ պակաս բեռնատարներից բաղկացած ավտոպարկ: Մասնատումը և ապակենտրոնացումը շատ անարդյունավետություններ են ստեղծում, քանի որ փոխադրողներն այսօր գործում են՝ հիմնվելով բեռնափոխադրողների, բրոքերների, բեռնարկերի և Տրանսպորտային կառավարման (TMS)՝ հավասարապես մասնատված համակարգի որոշումների վրա, ինչի հետևանքով վարորդները բաց են թողնում եկամտաբեր բեռնափոխադրման հնարավորություններ:

Վերջին տասնամյակում գնալով կրճատվում են փոխադրման ծավալները, որովհետև վարորդների քանակը բավարար չէ՝ ազգաբնակչության բեռները տեղափոխելու համար: Սա էլեկտրոնային առևտրի, մատակարարման շղթաների գլոբալիզացիայի և բնակչության աճի, ինչպես նաև բեռնատարների վարորդների առաջարկի նվազման և ապակենտրոնացված ու մասնատված բեռնափոխադրումների արդյունաբերության արդյունք է:



Բազմաթիվ գործոններ խանգարում են մարդկանց մուտք գործել բեռնափոխադրումների ոլորտ կամ հեռացնում են նվիրված, աշխատասեր և հմուտ վարորդներին բեռնափոխադրումներից՝ հետագայում նպաստելով փոխադրումների հզորության կրճատմանը:



Չնարավոր լուծում

Առաջադրանքի հիմնական նպատակն է՝ վարորդի պատվերները դարձնել ավելի արդյունավետ և բարելավել վարորդների՝ աշխատանք-կյանք հավասարակշռությունը՝ ներկայացնելով AI-ի վրա հիմնված լուծումներ:

- Կրճատել վարորդների և դիսպետչերների միջև անհարկի հաղորդակցությունը
- Ապահովել նախապատվությունների հիման վրա երթուղիների ընտրությունը և պլանավորումը
- Ստեղծել տեսքտը ձայնի վերափոխելու ֆունկցիա